ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1954 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ ԲԱՔՎՈՒՄ

1954 թ. ապրիլի 2-ին Բաքվում իր աշխատանքներն ավարտեց Մոսկվայի և Անդրկովկասի գիտնականների միացյալ գիտական սեսիան, որին մասնակցում էին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Պատմական գիտությունների և Փիլիսոփայության բաժանմունքները, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Էկոնոմիկայի իրավունքի բաժանմունքները, ինչպես և վրացական, ադրբեջանական և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիաների Հասարակական գիտությունների բաժանմունքները։

Սեսիայում ներկա էին միջին ասիական ռեսպուբլիկաների ու Դաղստանի գիտնականները, ինչպես և պարտիական ու սովետական կազմակերպությունների ներկայացուցիչներ։

1954 թ. մարտի 29-ի նիստում, սեսիան բաց անելով, Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ընկ. Ալիևը ընդգծեց գիտական խնդիրները համատեղ մշակելու անհրաժեշտությունը և Ադրբեջանի գիտնականների կողմից ողջունեց ՍՍՌՄ հյուրերին, հաջողություն ցանկանալով նրանց աշխատանքին։

Պրեզիդենտ Ալիևի ներածական ճառից հետո, սեսիայի հերթական նիստերում կարդացվեցին հետևյալ զեկուցումները. 1) Կոմունիստական պարտիայի ղեկավարող և ուղղություն տվող դերը կոմունիզմի շինարարության մեջ, զեկուցող՝ պատմական գիտությունների թեկնածու Վ. Ջա. Ջևին. 2) Ժողովրդական մասսաների դերը կոմունիզմի շինարարության մեջ, զեկուցող՝ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ պրոֆ. Մ. Դ. Կամարի. 3) Սովետական պատմաբանների կարևորագույն խնդիրները, զեկուցող՝ ակադեմիկոս Ա. Մ. Պանկրատովա. 4) Ադրբեջանական, վրացական և հայկական սոցիալիստական ազգերի կազմավորման ու զարգացման մասին, զեկուցողներ՝ Ադրբեջանական Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ պրոֆեսոր Ի. Ա. Հյուսեինով, Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Վ. Խաչապուրիձե և պատմական գիտությունների թեկնածու Ա. Մ. Հակոբյան. 5) Անդրկովկասյան ժողովուրդների պատմության պերիոդիզացիայի հիմնական պրոբլեմները, զեկուցող՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ պրոֆեսոր Ս. Տ. Երեմյան. 6) Անդրկովկասյան ժողովուրդների պատմության ֆալսիֆիկացիան արդի անգլո-ամերիկյան և թյուրքական ռեակցիոն պատմագրության մեջ, զեկուցող՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Մ. Գ. Ներսիսյան. 7) Ադրբեջանական աշխատավորների պայքարը հանուն Սովետական իշխանության հաղթանակի, զեկուցող պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Զ. Ի. Իբրահիմով. 8) XIX դարի Ռուսաստանի առաջադեմ գաղափարների ազդեցությունն անդրկովկասյան ժողովուրդների հասարակական մտքի զարգացման վրա, զեկուցողներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր Խ. Ն. Մոմջյան, փիլիսոփայական գիտությունների թեկնածուներ Մ. Մ. Կասաուռով և Ն. Արզիանիձե. 9) ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումի որոշումը և սովետական տնտեսագիտության խնդիրները, զեկուցող՝ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վ. Պ. Դյաչենկո. 10) Ադրբեջանի գյուղատնտեսության զարգացման դրությունն ու նրա հեռանկարները, զեկուցողներ՝ պրոֆեսոր Ա. Ս. Սարաջև և գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ն. Ս. Յաշվիլի. 11) Գյուղատնտեսական հումքային բազաների ու պարենային և արդյունաբերական ապրանքների զարգացումը Հայկական ՍՍՌ-ում, զեկուցող՝ տնտեսական գիտությունների թեկնածու Ս. Ի. Խրիմյան. 12) Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրությունը գրականության մեջ, զեկուցողներ՝ դոցենտ Բ. Ռ. Ժգենտի, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուներ՝ Մ. Յ. Գուլիզիձե, Է. Ս. Թոփչյան և Ս. Ա. Հարությունյան. 13) Ակադեմիկոս Վ. Վ. Վինոգրադովի «Սովետական լեզվաբանության դրությունն ու նրա խնդիրները» աշխատասիրությունը, ընթերցող՝ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Բ. Ա. Սերեբրեննիկով. 14) Վրաց գրականության և լեզվի կազմավորման հարցի շուրջը, զեկուցողներ՝ Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ պրոֆեսոր

Վ. Տ. Թոպուրիա և ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ի. Մ. Դիգինեյշվիլի. 15) Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի՝ Ռուսաստանին միանալու պրոգրեսիվ նշանակությունը. զեկուցողներ՝ Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ն. Ա. Բերձենիշվիլի, պատմական գիտությունների դոկտոր Յա. Զ. Յինցաձե, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Վ. Ա. Պարսամյան, պատմական գիտությունների թեկնածուներ Վ. Վ. Ոսկանյան, Գ. Բ. Աբդուլլաև և Մ. Մ. Էֆենդիև. 16) Մարքսիզմն Անդրկովկասում տարածվելու (մինչև ռուսական առաջին ռևոլյուցիան) պատմությունից, զեկուցողներ՝ պատմական գիտությունների թեկնածուներ Ա. Ն. Դուլիև, Վ. Ա. Ավետիսյան և փիլիսոփայական գիտությունների թեկնածու Լ. Ե. Գորգիլաձե. 17) Հայկական ՍՍՌ Էներգետիկ ռեսուրսները և նրանց օգտագործումը ժողովրդական տնտեսության զարգացման համար, զեկուցող՝ Կ. Ե. Վերմիշև. 18) Վրացական ՍՍՌ արդյունաբերության հիմնական ֆոնդերի օգտագործման խնդիրները, զեկուցող՝ տնտեսական գիտությունների թեկնածու Կ. Մ. Դադիանի. 19) Արտադրությունն ու սպառումը սոցիալիզմի ժամանակ, զեկուցող տնտեսական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Բ. Ի. Ախունդով. 20) Միրզա Ֆաթալի Ախունդովի ստեղծագործությունը, զեկուցող՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Մ. Դ. Ջաֆարով. 12) Դաբրիել Սունդուկյանի ստեղծագործությունը, զեկուցողներ՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուներ Ռ. Վ. Զարյան և Կ. Մ. Թարվերդիևա. 22) Իլյա Ճավճավաձեի ստեղծագործությունը, զեկուցողներ՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուներ Ռ. Ալիևա և Լ. Ն. Ասատիանի. 23) Ռուսաց լեզվի բարերար ազդեցությունն արդի հայերենի և ադրբեջաներենի վրա սովետական ժամանակաշրջանում, զեկուցողներ՝ ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Ս. Կ. Ղազարյան և ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Ա. Ռուստամով. 24) Վրաց լեզվի բացատրական բառարանի կազմելու սկզբունքները՝ քերականության կառուցվածքի առանձնահատկությունների կապակցությամբ, զեկուցող՝ Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Ե. Չիկոբավա. 25) Հայերեն բարբառների կլասիֆիկացիայի սկզբունքները, զեկուցող՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ա. Ս. Ղարիբյան։

Զեկուցումների շուրջը տեղի ունեցած մտքերի փոխանակությանը մասնակցեցին ընկ. ընկ. Դիակոնովը, Անչարաձեն, Յամպոլսկին, Տոկարժևսկին, Նաչաֆովը և ուրիշները։

Անդրկովկասյան ռեսպուբլիկաներում կատարված արխեոլոգիական աշխատանքների մասին (Մինգեչաուր, Կարմիր բլուր, Դառնի, Վրաստանի միջնադարյան հուշարձաններ) հաղորդում արեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ պրոֆեսոր Բ. Բ. Պիոտրովսկին և պատմական գիտությունների թեկնածուներ Բ. Ն. Առաքելյանը, Ս. Մ. Կագիևը և Դ. Ա. Լոմպատիձեն։

Սեսիայի նիստերը տեղի ունեցան մարտի 29-ին, 30-ին և 31-ին։ Ապրիլի 2-ին Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում, եզրափակիչ պլենար նիստում ակադեմիկոս Ա. Մ. Պանկրատովան ամփոփեց սեսիայի աշխատանքները, ցույց տվեց նրանց բեղմնավոր կողմերը։

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Սամեդ Վուրգունը։

Սեսիայում կարդացված զեկուցումներից մի քանիսը կտպագրվեն «Տեղեկագրի» հաջորդ համարներում։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ